

չրջան են հայ մշակույթի բազմադարյան պատմության մեջ: Հեղինակները հանգամանորեն ընդգծում են այդ ժամանակաշրջանի մշակույթի զարգացման առանձնահատկությունները, նրա արտահայտման տարբեր ձևերն ու դրսևորումները:

Հատորում բոտ արժանվույն գնահատված է ֆենարկվող ժամանակաշրջանի գրականության, գիտության, արվեստի, մամուլի, դպրոցական և մշակութային գործիչների վաստակը. արժեքավորված են գրականության, թատրոնի, երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի, պատմագիտության, հնագիտության, հայագիտության, ազգագրության, տնտեսագիտության, փիլիսոփայության, բժշկության և բժշկագիտության, բնական գիտությունների նվաճումները:

Հրատարակի վրա է ավելի քան հազար մեծադիր էջերից կազմված աշխատություն, որը հեղինակների և խմբագիրների երկար տարիների տնտեսական արդյունքն է: Հատորը ոչ միայն ընդհանրացնում և նոր լույսով դիտել է տալիս արդեն հայտնի փաստերը, այլև զգալի չափով նոր հարցադրումներ ունենալով՝ գիտական հետազոտություն է ներկայացնում նաև մասնագետների համար: Հեղինակները գիտական շրջանառության մեջ են մտցրել նոր նյութեր, վավերագրեր, արխիվային նոր և հետաքրքիր լուսանկարներ:

Հատորում Արևելյան և Արևմտյան Հայաստանի ու հայկական զաղթողախմբերի պատմության հարցերը դիտվում են միասնության մեջ, որպես մի ժողովրդի պատմության ամբողջական պատմական պրոցես. որև ավելի է բարձրացնում աշխատության արժեքը:

Սակայն աշխատության մեջ տեղ են գտել նաև բացթողումներ, վրիպումներ, շլուսաբանված հարցեր: Այսպես, 1870—1880-ական թթ. արևելահայ և արևմտահայ հասարակական հոսանքների պատմության լուսաբանությանը նվիր-

ված է ընդամենը հինգ էջ (163—167) և թուղթիկ են ներկայացված ազգային-պահպանողական, լիբերալ ու դեմոկրատական հոսանքները իրենց մամուլի բազմաթիվ օրգաններով:

Հստակություն չկա «Արմենական» կուսակցության բնութագրման հարցում: Մեզ թվում է, որ պետք էր ճշտել նաև հայ բուրժուական ազգի կազմավորման հետ կապված խնդիրները:

Հեղինակները և խմբագիրները հատորում միանգամայն իրավացիորեն գետնելի են Վ. Ի. Լենինի և նրա ականավոր զինակիցների, ինչպես նաև Նշանավոր հեղափոխականների, բոլշևիկների նկարները, սակայն չգիտենք թե ինչու՞ բաց են թողել ՌՄԴԲԿ Երևանի կազմակերպության աչի ընկնող գործիչներ Գ. Սոկոլովսկու և Ա. Մեխիջյանի նկարները: Մեզ թվում է, որ հայ ժողովրդի պատմության այսպիսի համապարփակ աշխատության մեջ պետք էր տալ նաև հայ հասարակական ֆաղափական առաջընթաց գործիչներից Ավետիս Նազարբեկի և ազգայնագետագրական պայմարի աչի ընկած և զոհված մարտիկներից Փարամազի (Մատթևոս Սարգսյան), Կևորց Ջառույի (Կևորց Աղամյան), Քեռու (Արշակ Կաֆաֆյան) նկարները:

Հատորում կան նաև կրկնություններ, որոշ անհաջող ձևակերպումներ, ձգձգված նկարագրություններ:

Վեյամոծ նշված թերություններին, հատորի լույսընծայումը կարևոր երևույթ է սովետահայ պատմագիտության մեջ: Հեղինակային կոլեկտիվը կատարել է մեծ աշխատանք: Հատորում տրված են հրահանգումներ ճիշտ են և խարսխվում են անհրաժեշտ փաստական նյութի և գիտական-մարքսիստական վերլուծության վրա:

«Հայ ժողովրդի պատմության» 6-րդ հատորը մի նոր առաջընթաց ֆալլ է հայ պատմագիտության մեջ:

2. ՊՈՂՈՍՅԱՆ  
Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Օ. Մ. ХАЛПАХЧЯН, Архитектурные ансамбли Армении (VIII в. до н. э.—XIX в. н. э.), изд. «Искусство», М., 1980, 479 с., илл.

Անցյալ տարի Մոսկվայում «Եսկուստվո» հրատարակչությունը ռուսերեն և անգլերեն լեզուներով լուս է ընծայել ՍՍՀՄ պետական մրցանակի և Հայկական ՍՍՀ Քորոս Քորամանյանի անվան մրցանակի դափնեկիր, ճարտարապետության տեսության և պատմության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր Հովհաննես Խ. Խալպախչյանի «Հայաստանի ճարտարապետական համալիրները» գիրքը: Անհրաժեշտ է նշել, որ այդ աշխատությանը նախորդել են նրա գրքերն ու հոդվածները հայ-ռուսական և հայ-սօվետական ճարտարապետական կապերի, հայ-

կական ֆաղափացիական շինությունների, միջնադարյան վանական համալիրների մասին և այլն:

2. Խ. Խալպախչյանի նոր ուսումնասիրությունը մ. թ. ա. 8-րդ դարից մինչև մ. թ. 19-րդ դարը ստեղծված հայկական առանձին ճարտարապետական համալիրներին նվիրված առաջին ընդհանրացնող երկապիտությունն է և իբրև այդպիսին եզակի աշխատություն է հայագիտության բնագավառում:

Խնդրա առարկա զբնում հետազոտվում են էրեքունիքի, Կառնիքի, Կլիքի, էլմիածնի, Տաթևի կառույցները, միջնադարյան վանական առավել

աշխի ընկնող համալիրները, այնպիսի նվիրա-  
կան կորոզներ, ինչպիսիք են Հաղպատը, Գոշա-  
վանքը, Սանահինը, Գեղարդը, Կեչառիսը և ու-  
րիշներ:

Կրֆի վերնագիրը որոշ չափով պայմանական  
է, որովհետև այստեղ ընդգրկված են լոկ Հայ-  
կական ՍՍՀ տարածքում պահպանված ամենա-  
հայտնի հուշարձանախմբերը: Հանրապետության  
ոչ բոլոր համալիրներն են ներկայացված, ուստի  
աշխատության ենթաձևակ բաժնում հեղինակը  
նշում է, որ «նյութն ամենևին չի հավակնում  
լիովին ընդգրկել առաջադրված խնդիրը»:

Կրֆի ներածությունը հայ ճարտարապետության  
գարգացման սեզոն ակնարկ է, որտեղ նկարագր-  
վում են տարբեր դարերի ընթացում հայ կա-  
ռուցողական ոգու նվաճումները, ազգային կա-  
ռույցների առաջացումը և միայն Հայաստանին  
բնորոշ կառուցվածքների ստեղծումը: Այստեղ  
գիտնականն անդրադառնում է հայ շինարար-  
կան արվեստի դասական շրջաններում՝ 6—7-րդ  
և 10—11-րդ դարերում կերտված հայկապ կո-  
թողներին և զանազան ժամանակաշրջաններին  
հատկանշական ճարտարապետական-գեղարվես-  
տական երևույթներին:

Հուշարձանները հետազոտվում են ժամանա-  
կագրական կարգով, բայց կողմնորոշող դեր ունի  
նաև կառույցների կարևորության աստիճանը և  
գեղարվեստական արտահայտչականությունը:  
Առանձին համալիրներին, ինչպես, օրինակ,  
Սանահին-Հաղպատ, Հաղարծին-Գոշավանք վան-  
քերի զույգ-զույգ ներկայացումը քեղարված է  
նրանց ոճական ընդհանրությամբ և միաժամա-  
նակ կառուցված լինելու հանգամանքով: Աշխա-  
տության 15 գլուխներից յուրաքանչյուրն ունի  
այս կամ այն շինության հատակագծային, տե-  
ղագրական բնույթը լուսաբանող գծագիր և ֆու-  
տեժ, նկարագրական, պատմական տեղեկությունե-  
րն ու լուսանկարների հավաքածու: Յուրաքան-  
չյուր համալիրի բնեկիս հեղինակն անպայման  
անդրադառնում է ժամանակաշրջանի ֆազիա-  
կան և մշակութային իրականությանը, գեղար-  
վեստի այն տեսակներին, որոնց օրինակները  
օրեէ կերպ առնչվում են հետազոտվող կառույ-  
ցի հետ: Այդ իմաստով հիշարժան է Էրեբունիի  
ֆանդակների ու որմնակարների հիշատակու-  
թյունը կամ Գառնիի տաճարին վերաբերող գրի-  
խում խճանկար հատակի և հայտնաբերված  
մարմարե արձանի նկարագրությունը: Էջմիածնի  
մայր տաճարի առիթով գիտնականը մատնա-  
նշում է ոչ միայն Հովնաթանյանների կատարած  
որմնակարները կամ կոթակները, այլև տաճարի  
քանդակարանում գտնվող Հավուց Քառի Ամենա-  
փրկիչ կալված 10-րդ դ. փայտակերտ պատկերը,  
17-րդ դարի շինագառող կաթողիկոսական գա-  
հերը, նախկինում վանքի գրադարանի սեփական-  
ությունը հանդիսացող Էջմիածնի Ավետարան  
կալված 989 թ. նշանավոր ձեռագրի մանրանկար-  
չությունը և քակում տեղադրված 13 ու 17-րդ

դարերի խաչաքերը: Այս ամենով հեղինակն  
ակնի ամբողջական է դարձնում համալիրից բա-  
տացվող տպավորությունը, լուսաբանում նրա  
կատարած մշակութային-քանդակարանային դերը  
անցյալում և այժմ՝ այդպիսով փոքր-ինչ ընդլայ-  
նելով գրքի զուտ ճարտարապետական բնույթի-  
կան:

Կրֆից ստացվող ուղեցույցային տպավորու-  
թյունը ուժեղանում է «Էջմիածին» գլխում Մայր  
տաճարի, Հռիփսեմի, Գայանեի, Ղվարբեցի,  
Շոգակաթի հուշարձանների կողմին Էջմիածնի  
բնակելի տների ճարտարապետության հիշատա-  
կությամբ և լուսանկարների հավաքածուի մեջ  
կաթողիկոսական զավագանի ու ծիսական ար-  
ժաթե զավագանի պատկերների ներկայությամբ:  
Նույն ձևով Տաթևին նվիրված գլխում վանքի  
տարբեր մասերի բնույթյան հետ մեկտեղ նկա-  
րագրվում է 895—906 թթ. Գագա-Պետրոս տա-  
ճարի որմնակարչությունը, Հովնաթ Ռոստե-  
ցու և Գրիգոր Տաթևացու օրոք համալսարանի  
գործունեությունը, հիշատակվում է 1297 թ.  
Կրիգոր Տաթևացու ծաղկած Ավետարանի ման-  
րանկարչությունը, Տաթևի Ավետարանի արժաթե  
կազմը, 1253 և 1614 թթ. շինվ փորագրված փայ-  
տե դռները և այլն: Այս ճանապարհով Հ. Ն. Խալ-  
փախյանը համեմատաբար վերականգնում է  
տվյալ կենտրոնի մշակութային կյանքի տարբեր  
կողմերը:

Նրի տեղ-տեղ, ինչպես, օրինակ, Գառնիին,  
Էջմիածնին, Էջմիածնին վերաբերող գլուխներում  
տեխնիկ շարադրանքը գլխավորապես արտա-  
հայտում է այլ գիտնականների մանրամասն ու-  
սումնասիրությունների արդյունքները, ապա Սա-  
նահինը և Հաղպատը բնեղ մասերում շարա-  
դրանքը հիմնականում խորսխված է հեղինակի  
նախկինում հրատարակած հանգամանակից, մե-  
նագրական բնույթի աշխատությունների վրա:  
Յուրաքանչյուր հուշարձան նա դիտում է հայ  
ճարտարապետության գարգացման ընդհանուր  
խորհի վրա, մյուս կառույցների հետ ունեցած  
կապերով հանդերձ, հետազոտելով տարբեր կա-  
ռուցվածքների զարգացումը և կրկնությունը ժա-  
մանակի ընթացքում: Այսպես, օրինակ, Հաղ-  
պատի զանգակատան գեղարվեստական հորին-  
վածքը նրա կարծիքով արտացոլվել է ոչ շրջա-  
նի, մասնավորապես Կարգի եկեղեցու զանգա-  
կատան կառուցվածքում, իսկ Կեչառիսի երկ-  
հարկանի ավանդատների առիթով հեղինակը  
նշում է, որ դրանք հետագայում իրականացվել  
են նաև Նոր Գեղեկում, Խորանաշատում և Մշկա-  
վանքում: 1215 թ. կառուցված Գեղարդի կաթողի-  
կի թմբակի ձևավորումը մտն է նույն թվականին  
Անիում Տիգրան Հոնեցի մեկնեատությամբ շին-  
ված ս. Կրիգոր եկեղեցու գմբեթի զարդարան-  
քին: Դա հիմք է տալիս Հ. Ն. Խալփախյանին  
առաջ ֆաշելու երկու կառույցները միևնույն  
հեղինակին կամ հեղինակային խմբին վերա-  
գրելու հարցը:

Հովհաննավաներ և Սաղմոսավաներ բնեղ գլխում հիշարժան է գիտնականի կարծիքը վերջինիս գրատան մասին: Նա գտնում է, որ գրատանը իր կառուցվածքով յուրահատուկ շինություն է Հայաստանի կառուցողական արվեստում:

Ի տարբերություն մյուս ստեղծագործությունների, հայ ճարտարապետության բիշ ուսումնասիրված օրինակներից են Հառիճի, Խորակերտի, Մակարավանքի, Խորանշատի վանքերը ու Մուղնու ս. Կեռոզ եկեղեցին: Հովհաննես Խալիփաշյանի գրումը դրանք նկարագրված է վերլուծված են համառոտ: Անվանի գիտնականի համոզմամբ Խորակերտի կորոզի գմբեթը իր գեղարվեստական և կառուցվածքային ձևով եզակի երևույթ է թե՛ հայկական և թե՛ համաշխարհային ճարտարապետության մեջ: Այն «միջանկյալ օղակ է սովորական գմբեթների և գանգախտների համար կիրառվող բազմասյուն ուստեղների միջև»: Խնդրա առարկա գրումը բնեղ ճախավերջին հուշարժանը Ամաղուի նորավանքն է՝ հայ արվեստի ամենարժեքի նմուշներից մե-

կը: Վերջին տարիներին այս կառույցի ճարտարապետությունն ու փանդակները իրենց վրա են բեռնել հայ և օտարագրի գիտնականների ուշադրությունը և միաժամանակ լույս են տեսել նրան նվիրված մի շարք ուսումնասիրություններ: Այդումանդերն աշխատության հիշյալ գլուխը որոշակի կարևորություն ունի համալիրի ըստ ամենայնի հետազոտության իմաստով:

Յուրաքանչյուր գլխի վերջում տրված է տվյալ հուշարժանի մասին վերաբերող գիտական գրականության ցանկը: Կրեթե բոլոր ցանկերում, ի թիվս այլ հեղինակների երկասիրությունների, տեսանելի են Հովհաննես Խ. Խալիփաշյանի աշխատությունները, որոնք լույս են տեսել գրքերի ու հոդվածների ձևով: Դրանք ցույց են տալիս, որ խնդրա առարկա գիրքը հեղինակի երկարամյա հետազոտությունների արդյունքն է: Այս գիրքը եւր խոսք է հայ արվեստի ուսումնասիրման անդառառնում, կարևոր փայլ՝ հայ ճարտարապետության ընդհանուր պատմությունը շարադրելու, ամբողջացնելու ճանապարհին:

Լ. ՉՈՒԿԱՆՉՅԱՆ

#### Գ. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, Պարսից լեզվի ֆեռականություն, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1980, 449 էջ:

Советская иранистика пополнилась новой фундаментальной работой — первой научно-учебной грамматикой персидского языка на армянском языке, составленной Г. М. Налбандяном. Потребность в такого рода труде в особенности за последние десятилетия остро ощущается в связи со все возрастающим интересом к изучению персидского языка и литературы, служащих объектом изучения и преподавания в нашей стране, и в частности в Советской Армении.

Работа Г. М. Налбандяна является итогом его многолетнего изучения и преподавания персидского языка в Ереванском университете и основана на богатом опыте научно-педагогического общения с армянской аудиторией. Она представляет безусловный научно-методический и теоретический интерес для всех тех, кто занимается вопросами фонетической системы, морфологического строя и механизма словообразования современного персидского языка.

Показательно, что работа строится на основе метода билингвального сопоставительного анализа, в результате применения которого в персидском языке обнаружен ряд специфических особенностей, остававшихся ранее не замеченными. Вместе с тем этот метод привел к более глубоким суждениям о типологии изучаемого языка вообще и о структуре и функциях языковых элементов различных уровней. Не менее плодотворным оказался данный метод и в наблюдениях над некоторыми важными особенностями синтаксической органи-

зации высказывания в персидском языке.

Таким образом, труд Г. М. Налбандяна, построенный на основе сопоставительного-типологического метода, призван на материале персидского языка (в сопоставлении с армянским языком) решить задачи, стоящие перед одним из ведущих направлений современной советской лингвистики и методики преподавания иностранных языков. Основная цель применения этого метода — максимально обеспечить успешное изучение иностранного языка и овладение им в кратчайшие сроки.

Работа Налбандяна имеет следующую структуру: 1. Фонетика. 2. Лексикология. 3. Морфология. Она сопровождается предисловием и обширным введением, в котором освещены периоды исторического развития персидского языка и вопросы, связанные с определением его места в системе иранских и — шире — индоевропейских языков. Здесь же дается обстоятельная характеристика письменных памятников на персидском языке, современной диалектной структуры этого языка. Заметим, что эта часть работы имеет самостоятельное значение. Изложенные в ней вопросы по их бесспорной значимости могут войти в теоретические исследования по персидскому языку и диалектологии.

В разделе фонетики прежде всего характеризуется речевой аппарат и артикуляционная база, выделяются акустические и анатомо-физиологические основы произношения и восприятия звуков. Автор описывает систему согласных и гласных фонем и дает их качественную характеристику,